

իշխանեն սկսեալ մի թէ՛ ամեն մարդ ձեզ չի ճանչեր... Ձեր կամքը կը կատարուի, ապահով եղէք:

Ծերը ձեռքը երախակալեն վեր առաւ եւ ելաւ գնաց առանց բան մը գրուցելու: Իսկ Յուսիկ ետեւէն նայելով, երբ գուռը զոցուեցաւ՝ «Այս կատաղի ծերը ո՞ր դժոխք դուրս թափեց,— կ'ըսեր ինքնիրեն տետրակներն առաջ քաշելով բարկութեամբ,— ե՞՞րբ եկաւ, որ մարդ նաեւ չիմացաւ: Այս մարդն աստուծոյ պատուհաս է իմ գլխուս, ամենուն խօսք հասկցնել կարելի է՝ մէկուն երեսին կը ծիծաղիս, միւսը կ'անուշես, ուրիշի մը իրաւունք ունիս կ'ըսես եւ գիտցածդ կ'ընես. բայց սա գազան մ'է՛ խօսք չի հասկնար, քաղցր խօսիս՝ կը կատողի, դառն խօսիս՝ սուր կը քաշէ, կամքը չի կատարես՝ կը կախեմ կըսէ, վերջապէս պատուհա՛ս, պատուհա՛ս: Չէ՞ որ զինուոր եմ, մարդկային արհնով շաղախ եալ, շաղուեալ մարդիկ. ի՞նչ տարբերութիւն ունին աւազակներէ: Օրինաւոր աւազակնե՛ր, ոչ մարդու յարգ գիտեն, ոչ արծաթի: Սոցայ ամենէն լաւը, ամենէն խելօքը իշխանն է, որ կարդալ դրել դիտէ, հաշուել նաեւ գիտէ, եւ այդ մարդը զիս իմ պաշտօնես հանել կրցեր է մտածել առանց խորհրդածելու թէ ուրիշ Յուսիկ մը գտնել կարելի չէ բոլոր Վասպուրականի մէջ. վերջապէս զինուոր՛, եւ որովհետեւ քանի մը քսակ ոսկուոյ ձեռք ձգեր է ո՛յ գիտէ ուստից՝ անշուշտ աւազակութեամբ՝ միտքը դրեր է թէ Յուսիկի պէտք չի կա... Իբրեւ թէ ոսկուոյ աղբիւր գտեր է: Բարեբախտաբար իշխանուհին՝ թեպէտ շատ պակասաւոր բայց երկնէն խելօք՝ իմացեր է թէ Ռշտունեաց տունը առանց Յուսիկի չի դառնար, զինքն արգիլել է, ինչպէս եւ խոստովանեցաւ... Երբեմն կը մտածեմ, վասնզի ինձ էլ կիրք կ'ուզայ, որ սոցայ հպարտութիւնը պատմելու համար թողում հրաժարիմ: Այո, հրաժարիմ, երթամ քաշուիւմ Արտամետ, նստիմ տունս. հանգիստս նայիմ, բայց երբ միտքս կ'ուզայ թէ այսչափ տարի խնայութեամբ ժողուած հազարաւոր ոսկուոյ քսակներս պիտի թողում, որ գան յւրիշները յիմարաբար, շռայլաբար, ցանուցիր ընեն, գողնան, գողցնեն, չեմ կրնար համոզուիլ: Ոչ իշխանը, ոչ իշխանուհին չեն հասկնար՝ խելքերնին չի հասնիր. Աւետարանը գրուցեր է. «Մի՛ արկանէք զմարգարիտս ձեր առաջի խոզաց». մե՛ծ խրատ կայ այդ խօսքին մէջ. ես լաւ կը Յասկնամ, պէտք չէ, որ այսչափ տարի աշխատելես վերջ թողում այս ոսկիները, որ դարձեալ մարգարիտ կը նշանակեն, եւ աւելի լաւ արժէք ունին. ժամանակին կը դիմանան, դեղնելէ վախ չունին, չեն ժանգոտիր, հրդեհէ չեն վախեր:— Բարեբախտաբար չեն գիտեր նաեւ թէ ի՞նչ ունին տայս Ռշտունիք, եւ ես չեմ յայտներ...»:

Այս խորհրդածաթեանց վրայ էր Յուսիկ, երբ սպասաւոր մը եկաւ թէ իշխանուհին զինք կուզեր տեսնել: Արկղ, երկաթի դուռ, փայտի դուռ՝ ամենն էլ զգուշութեամբ գոցելէն վերջ, ուղղուեցաւ իշխանուհուոյն սենեակը: